



ՈՐՈՇՈՒՄ N 15

23 դեկտեմբերի 2015 թվականի

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2016-2020 ԹԹ.
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:


Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Հավելված
ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի
2015 թ. դեկտեմբերի 23-ի նիստում
ընդունված N 15 որոշման
ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Ա. Սարգսյան _____

ԵՊՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (2016-2020 ԹԹ.)



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը կրթական, գիտահետազոտական և մշակութային ինքնավար, բարձրագույն ուսումնական հաստատություն է, որը ՀՀ օրենսդրությամբ ունի հատուկ կարգավիճակ:

ԵՊՀ գործունեությունը նպատակաուղղված է հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտությունների և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթական ծրագրերի և հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների իրականացմանը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Երևանի պետական համալսարանը ձգտում է տրամադրելու որակյալ կրթական ծրագրեր, իրականացնելու նորարարական ուսանողամետ ուսուցում, խրախուսում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում:

ԵՊՀ-ն ձգտում է դառնալու այնպիսի հաստատություն, որը՝

- ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր՝ խարսխված հետազոտության, ստեղծագործ աշխատանքի ու նորարարության վրա և համահունչ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի հիմնարար սկզբունքներին,
- ապահովում է ուսանողների՝ բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը,
- մատչելի է և ընտրության լայն հնարավորություններ է ընձեռում հասարակության ամենատարբեր շերտերին,
- ուսանողներին և աշխատողներին տրամադրում է բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր,
- իր գործունեության բոլոր բնագավառներում ապահովում է որակի անընդհատ բարելավում՝ բուհի գործուն և արդյունավետ վարչարարության և կառավարման միջոցով,
- տրամադրում է լրացուցիչ շարունակական կրթության և մասնագիտական խորհրդատվության ծառայություններ՝ հանրային պահանջարկին համապատասխան:

ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Երևանի պետական համալսարանի հիմնարար արժեքներն են.

1. Ուսանողի հաջողությունը

Համալսարանի ուշադրության կենտրոնում առաջին հերթին ուսանողի կրթական ձեռքբերումները, ուսումնառությունից նրա բավարարվածությունը և հաջողություններն են: Այդ նպատակով Համալսարանը ուսանողի կարիքները դնում է իր ակադեմիական գործունեության և օժանդակ ծառայությունների կազմակերպման, կրթական քաղաքականության և կրթական ծրագրերի մշակման հիմքում:

2. Մատչելի կրթություն

Համալսարանը կարևորում է յուրաքանչյուր կարողունակ անհատի՝ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը և ուսանողներին ապահովում է բարձրորակ և մատչելի կրթական փորձառությամբ, տրամադրում ֆինանսական աջակցություն:

3. Բարձրակարգ գիտամանկավարժական կազմ

Համալսարանի կարևորագույն ներուժը և գործունեության հաջողության հիմնական գրավականը նրա բարձրակարգ գիտամանկավարժական կազմն է, որի շնորհիվ Համալսարանն իրականացնում է իր առաքելությունը:

4. Ակադեմիական ազատություն և ազնվություն

Համալսարանը կարևորում է յուրաքանչյուր ուսանողի և աշխատողի ակադեմիական ազատությունը և ազնվությունը:

5. Ժողովրդավարական միջավայր

Համալսարանը կարևորում է ուսանողների և աշխատողների մասնակցությունը բուհին վերաբերող կարևորագույն հարցերի քննարկմանն ու որոշումների ընդունման գործընթացին՝ արժևորելով բազմակարծությունն ու ժողովրդավարական միջավայրը:

6. Սոցիալական գործընկերություն

Համալսարանը կարևորում է սոցիալական գործընկերությունը՝ որպես շահերի հավասարակշռման, սոցիալական համերաշխության և հավասարության ապահովման, ինչպես նաև խնդիրների լուծման արդյունավետ եղանակների որոշման հիմնական միջոց:

7. Համազգային պատասխանատվություն

Գիտակցելով իր դերը մեր երկրում գիտելիքների վրա հիմնված հասարակություն ձևավորելու գործում՝ Համալսարանը ձգտում է դառնալու միջազգային չափանիշներին համապատասխան համազգային գիտակրթական կենտրոն:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ-ում ստացած կրթությունից:

Խնդիր 1.1. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Վերանայել մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը (առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար):
2. Վերամշակել մագիստրոսի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:
3. Ստեղծել բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»՝ ծրագրի պատշաճ մշակման և իրականացման նպատակով:
4. Վերամշակել բակալավրի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:
5. Մշակել և իրականացնել միջմասնագիտական մագիստրոսական նոր ծրագրեր:
6. Վերանայել կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերը:

7. Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխանեցված՝ բակալավրի 50 և մագիստրոսի 120 կրթական ծրագրեր:
- Ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման նորացված կանոնակարգային հենք:
- Պրակտիկաների վերաբերյալ հարցումների բարելավված արդյունքներ:
- Միջմասնագիտական մագիստրոսական ծրագրերի թվի աճ:

Խնդիր 1.2. Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ստեղծել դասավանդման և ուսումնառության աջակցման կենտրոն՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտությունները արդիականացնելու ու զարգացնելու նպատակով:
2. Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:
3. Կրթափորձի կարգով ներդնել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:
4. Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:

5. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսությունների) գրագողությունը կանխելու նպատակով:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Դասավանդման և ուսումնառության աջակցման կենտրոնի գործունեության և իրականացվող ծրագրերի արդյունավետության վերաբերյալ դասախոսական կազմի հարցման արդյունքներ:
- Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների բարելավված արդյունքներ:
- Ֆորմատիվ գնահատման մեթոդների ընդլայնված կիրառում կրթական ծրագրերում:

Խնդիր 1.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Փորձնական սկզբունքով ստեղծել մի շարք կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար: Հաջողված փորձը տարածել բոլոր ծրագրերում:
2. Գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը մագիստրոսի ծրագրերի համար:
3. Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում:
4. Գործադրել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը:
5. Նախաձեռնել և իրականացնել ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթաց:
6. Նախապատրաստել և առցանց եղանակով իրականացնել ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, ինչպես նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Ուսանողների և շրջանավարտների հարցումների առցանց համակարգ և բարելավված արդյունքներ:
- Բոլոր կառույցներում և գործընթացներում՝ պլանավորում, իրականացում, ստուգում, բարելավում շրջափուլով աշխատելու ձևավորված պրակտիկա:

Խնդիր 1.4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ներդնել և շահագործել վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար:
2. Ձևավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար:
3. Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:
4. Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար:
5. Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:
6. Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:
7. Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Ներդրված վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ:
- Կրթական ծրագրերի՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով ապահովվածության աճ:
- Հեռակա ուսուցման դասընթացների ապահովվածություն էլեկտրոնային ռեսուրսներով:

Խնդիր 1.5. Ստեղծել լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել լեզուների ուսուցման նոր հայեցակարգը, Կենտրոնի կանոնադրությունը և ԵՊՀ այլ ստորաբաժանումների հետ փոխգործակցության մեխանիզմները:
2. Մշակել Կենտրոնի ծրագրային մեթոդական հենքը՝ լեզուների բազմամակարդակ ուսուցման համար:
3. Կազմակերպել օտար լեզուների դասընթացներ և հետագա թեստավորում (հավաստագրում)՝ ԵՊՀ և/կամ միջազգային վկայագրերի տրամադրմամբ:
4. Կազմակերպել հայոց լեզվի դասընթացներ օտարերկրյա քաղաքացիների համար՝ ԵՊՀ վկայագրերի տրամադրմամբ:

| |
|--|
| <p><i>Առաջընթացի գնահատման ցուցիչներ</i></p> <ul style="list-style-type: none">• Լեզուների ուսուցման և թեստավորման գործող կենտրոն:• Միջազգայնորեն ընդունված թեստավորման հավաստագրերի տրամադրում: |
|--|

II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը, համապատասխանեցնել ասպիրանտական կրթության չափանիշները համաեվրոպական պահանջներին:

Խնդիր 2.1. Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով:
2. Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար:
3. Ապահովել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցության ընդլայնում:
4. Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը:
5. Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում:

6. Ստեղծել Start-Up լաբորատորիաներ՝ բնագիտական ֆակուլտետների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում նորարարական հետազոտությունները խթանելու նպատակով:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակ:
- Ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակումների թվի աճ:
- Գիտահետազոտական ծրագրերում ներգրավված ասպիրանտների և մագիստրանտների թվի աճ:
- ՈւԳԸ գիտաժողովներում մասնակիցների թվի աճ:

Խնդիր 2.2. Չարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում:
2. Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը:
3. Նպաստել ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Առնվազն մեկ համատեղ հետազոտական ծրագիր յուրաքանչյուր ֆակուլտետում:
- Ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի ու դրանց մասնակիցների թվի աճ:

Խնդիր 2.3. Խթանել Համալսարանի հետազոտական գործունեության միջազ-

գայնացումը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ամրագրել հետազոտական գործունեության միջազգայնացումը՝ որպես ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանման գործունեության անհրաժեշտ բաղադրիչ:
2. Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում Համալսարանի աշխատողների հրապարակումները:
3. Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թիվը:
4. Շարունակել կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին ԵՊՀ աշխատողների մասնակցությամբ:
5. Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակումների թվի աճ:
- Օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թվի աճ:
- Միջազգային գիտաժողովներին մասնակցած աշխատողների թվի աճ:
- Միջազգային դրամաշնորհային ծրագրերի և գիտական նախագծերի թվի աճ:

Խնդիր 2.4. Համալսարանում բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի չափանիշները համապատասխանեցնել Ջալգբուրգյան սկզբունքներին:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Կատարելագործել ասպիրանտական կրթությունը՝ որպես կարևոր բաղադրիչ ընդունելով հետազոտությունների միջոցով նոր գիտելիքի ստեղծումը:
2. Մշակել և ներդնել ասպիրանտի ղեկավարման և մասնագիտական առաջընթացի գնահատման նոր գործընթաց՝ հիմնված ասպիրանտի, նրա ղեկավարի և Համալսարանի միջև հստակ պայմանագրային պարտավորությունների վրա:
3. Նպաստել ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցությանը:

4. Ապահովել որակյալ ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր:

| |
|---|
| <p style="text-align: center;"><i>Առաջընթացի գնահատման ցուցիչներ</i></p> <ul style="list-style-type: none">• Ասպիրանտների հետազոտություններում նորարարական բաղադրիչի մեծացում:• Ասպիրանտի, նրա ղեկավարի և Համալսարանի միջև ձևավորված պայմանագրային հարաբերություններ:• Ասպիրանտների համար բարելավված հետազոտական միջավայր: |
|---|

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացնել հանրային ներգրավման և ծառայությունների համակարգը, խթանել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը:

Խնդիր 3.1. Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Վերանայել ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգը:
2. Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը:
3. Ապահովել ինտերնետային պորտալի դի-նամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները:
4. Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել գովազդային նյութերը:
5. Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը:
6. Մշակել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգ, ընդլայնել և զարգացնել համալսարանի ներգրավումը համազգային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները:
7. Բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունը:
8. Գրահրատարակչական գործունեության արդյունքները առավելագույնս նպատակաուղղել հանրային ծառայությունների մատուցմանը:

Առաջընթացի գնահատման

ցուցիչներ

- ԶԼՄ-ներում ԵՊՀ-ի վերաբերյալ նպատակային և դրական լուսաբանումների թվի աճ:
- Պորտալի այցելությունների և կայքի հղումների ավելացում 50 %-ով:
- Մարքեթինգային և գովազդային նյութերի բազմազանեցում և ավելացում:
- Հանրային կարիքներին ուղղված ծրագրերի ընդլայնում:

Խնդիր 3.2. Ջարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ուսումնասիրել լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը և պարբերաբար իրականացնել շուկայում առկա լրացուցիչ կրթական ծրագրերի մշտադիտարկում:
2. Մշակել լրացուցիչ կրթության հայեցակարգ՝ ապահովելու Համալսարանի ծրագրերի մրցունակությունը:
3. Մշակել հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը:
4. Բարձրացնել լրացուցիչ կրթության ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Լրացուցիչ կրթական ծրագրերի թվի աճ:
- Վերապատրաստված ունկնդիրների թվի աճ:

IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Զարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:

Խնդիր 4.1. Զարգացնել դասախոսական կազմի ներուժը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը:
2. Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ:
3. Մահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների:

4. Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Որակավորման բարձրացում անցած շուրջ 1000 դասախոս:
- Վերապատրաստված շուրջ 300 երիտասարդ դասախոս:

Խնդիր 4.2. Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգ:
2. Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր:
3. Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար:
4. Մշակել աշխատանքի նկարագրեր ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար:
5. Մշակել և ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Մարդկային ռեսուրսների կառավարման գործող ստորաբաժանում, կառավարման էլեկտրոնային համակարգ:
- Վարչական պաշտոնի հաստատված շուրջ 200 անձնագիր:
- Ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատանքի հաստատված շուրջ 400 նկարագիր:
- Վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի շուրջ 500 աշխատողների վերապատրաստում և ատեստավորում:

Խնդիր 4.3. Բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, բազմազանեցնել իրականացվող սոցիալական ծրագրերը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը:
2. Մշակել վարչական և ուսումնասօժանդակ աշխատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և համապատասխան կարգ:
3. Բարձրացնել աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության:
4. Ներդնել սոցիալական աջակցության բազմաբնույթ ծրագրեր:
5. Համակողմանիորեն զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հասարակական սննդի, հանգստի և մարզաառող-

ջարանային բազաների պայմանները, ապահովել դրանց մատչելիությունը բոլոր աշխատողների և սովորողների համար:

Սուաջրնթացի գնահատման ցուցիչներ

- ԵՊՀ աշխատակիցների աշխատավարձի բարձրացում՝ միջինում մինչև 25 %:
- Դասախոսների տարբերակված հավելավճարի բարձրացում:
- Սոցիալական ծրագրերի բազմազանեցված տեսականի և սոցիալական ծախսերի ավելացում:

V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:

Խնդիր 5.1. Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել համալսարանական ենթակառուցվածքները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Տեխնոլոգիապես վերազինել լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները:
2. Վերանորոգել և արդիականացնել գիտական լաբորատորիաները:
3. Ստեղծել լեզուների ուսուցման կենտրոնի ենթակառուցվածք:
4. Արդիականացնել դահլիճների և սրահների տեխնիկական հագեցվածությունը:
5. Արդիականացնել մարզահամալիրը:
6. Վերակառուցել Դիլիջանի մարզաառողջարանային համալիրը:
7. Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ՝ զուգահեռ ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ:
8. Վերանորոգել և արդիականացնել գրադարանի ընթերցասրահներն ու գրապահոցը:
9. Ընդլայնել հանրակացարանային բազան:
10. Զարգացնել ուսումնական մասնաշենքերի հսկողության ենթակառուցվածքը:

11. Արդիականացնել օպերատիվ տպագրական աշխատանքներ իրականացնող ենթակառուցվածքը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Տեխնոլոգիապես վերազինված շուրջ 50 լսարան ու ուսումնական լաբորատորիա:
- Արդիականացված 15 գիտական լաբորատորիա:
- Վերանորոգված մարզահամալիր:
- Դիլիջանի գործող մարզաառողջարանային համալիր:
- Հանրակացարանային 150 տեղ:
- Լեզուների ուսուցման կենտրոնի ենթակառուցվածք:
- Վերանորոգված ուսումնական մասնաշենքեր:

Խնդիր 5.2. Չարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգ:
2. Ստեղծել «սովորող-համալսարան» վիրտուալ տիրույթ՝ վարչական, ուսումնական գործընթացներին (առարկայական ծրագրեր, հարցաշարեր, գրականություն և այլն) առնչվող տեղեկատվությամբ:
3. Չարգացնել ներքին համակարգչային օպտիկամանրաթելային, լարային և անլար ցանցը՝ մեծացնելով կապուղիների թողունակությունը:
4. Արդիականացնել համալսարանական տեղեկատվական համակարգերի սերվերային պարկը:
5. Բարձրացնել ներքին տեղեկատվական համակարգերի պաշտպանվածության մակարդակը:
6. Մշակել գրադարանի զարգացման հայեցակարգ:
7. Ավարտել հիմնական ուսումնական գրականության թվայնացման գործընթացը, ապահովել գրադարանի էլեկտրոնային քարտարանի ամբողջական ձևավորումն ու շահագործումը:
8. Ընդլայնել համալսարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին:

9. Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը:
10. Բարձրացնել գրադարանային ծառայությունների որակը, ընդլայնել ընթերցասրահների և համակարգչային սրահների աշխատաժամերը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Մասնաշենքերում ձևավորված ներքին օպտիկամանրաթելային ցանց, համակարգերի պաշտպանվածության արդի չափանիշներին համապատասխան մակարդակ:
- «Սովորող-համալսարան» գործող վիրտուալ տիրույթ
- Գրադարանի ամբողջական էլեկտրոնային քարտարան:
- Արդիականացված գրադարանային ծառայություն:

VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները, խթանել ուսանողական կազմակերպությունների աշխատանքները:

Խնդիր 6.1. Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները և գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից:
2. Զարգացնել ուսանողներին մատուցվող խորհրդատվական և լրացուցիչ կրթական ծառայությունները:
3. Ներդնել առարկայական խորհրդատվությունների համակարգ բակալավրի ծրագրի առաջին կուրսի ուսանողների համար, որոնք կիրականացնեն ավարտական կուրսերի ուսանողները, մագիստրանտները և ասպիրանտները:
4. Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբային համակարգը՝ շեշտադրելով ինտելեկտուալ, բնապահպանական, երկրագիտական և հայրենաճանաչողական բնույթի միջոցառումները:
5. Մշակել ուսանողների կողմից վարչական անձնակազմին տարբեր խնդիրներով դիմելու ընթացակարգ:
6. Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը:
7. Նպաստել ուսանողների ձեռներեցության հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների կայացմանը:
8. Ընդլայնել առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողներին մատուցվող ծառայությունները:
9. Ներդնել հեռավար եղանակով իրականացվող խորհրդատվությունների համակարգ առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:
10. Ապահովել շրջանավարտների հետ Համալսարանի և առանձին ֆակուլտետների շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Համալսարանին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Արդյունավետ ուսանողական խորհրդատվական և լրացուցիչ ծառայություններ:
- Բազմազանեցված մարզամշակութային ծրագրեր:

Խնդիր 6.2. Զարգացնել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների կարողություններն ու խթանել ուսանողական ինքնակառավարումը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել ուսանողական ինքնակառավարման հայեցակարգ:
2. Կազմակերպել ուսանողական կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստող և ուսանողների առաջնորդությանն աջակցող ուսուցողական դասընթացներ:
3. Խթանել Համալսարանի ուսանողական կազմակերպությունների ներհանրապետական և միջազգային համագործակցությունը:
4. Նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ՈԻԳԸ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ծրագրերում ներգրավված ուսանողների թվի աճ:
- Ուսանողների մասնակցությունը և առաջնորդությունը խթանող տարաբնույթ ուսուցողական դասընթացներ:
- Ուսանողական կազմակերպությունների մասնակցությամբ միջհամալսարանական և միջազգային ծրագրերի թվի աճ:

VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել Համալսարանի ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և այն համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին: Ընդլայնել օտարերկրյա ուսանողների համակազմը:

Խնդիր 7.1. Զարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Համալսարանի կառուցվածքում ստեղծել հենակետային վարժարան և նպաստել նրա շրջանավարտների ներհոսքին ԵՊՀ:
2. Քայլեր ձեռնարկել բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու համար:
3. Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգը:
4. ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներն անցկացնել 2 փուլով՝ ընդլայնելով մասնակիցների շրջանակը:
5. ԵՊՀ-ում պարբերաբար կազմակերպել տարբեր մասնագիտությունների գծով «Ամառային դպրոցներ» հանրապետության ավագ դպրոցների աշակերտների համար:
6. Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան:
7. Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները ՀՀ բոլոր մարզերում և այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովել անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:
8. Ընդլայնել ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների շրջանակը: Շարունակել ԵՊՀ դասախոսական կազմի կողմից մայրաքաղաքի ավագ դպրոցներում դասընթացների, իսկ մարզային դպրոցներում՝ առանձին դասախոսությունների իրականացումը:
9. ԵՊՀ դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործում:

***Առաջընթացի գնահատման
ցուցիչներ***

- Կենտրոնացված ընդունելության համակարգի դիմորդների ընդհանուր հոսքում ԵՊՀ դիմորդների առնվազն 30 % մասնաբաժին:
- Պայմանագրային հիմունքներով ԵՊՀ-ի հետ համագործակցող ավագ դպրոցներից Համալսարան եկող դիմորդների թվի աճ:
- Բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետների դիմորդների թվի աճ:
- ԵՊՀ կառուցվածքում գործող ավագ դպրոց:

Խնդիր 7.2. Օպտիմալացնել Համալսարանի ընդունելության կառուցվածքը և չափաքանակները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի և հանրության պահանջներին, կատարելագործել ընդունելության ընթացակարգերը և աշխատակարգերը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Օպտիմալացնել ընդունելության ամենամյա պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և կրթական ծրագրերի՝ ուղենիշ ունենալով արտաքին և ներքին միջավայրերի վերլուծությունը:
2. Պարբերաբար վերանայել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ընդունելության կանոնակարգերը և կրթական ծրագրերի ցանկը:
3. Բոլոր մակարդակների կրթական ծրագրերով ընդունելության ամենամյա պլանավորման համար աշխատանքներ իրականացնել համապատասխան ընթացակարգերի և աշ-

խատակարգերի կատարելագործման ուղղությամբ:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Բակլավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգեր ընդունված 13000 դիմորդ:
- Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգեր ընդունված 7000 դիմորդ:

Խնդիր 7.3. Մեծացնել օտարերկրյա ուսանողների համակազմը Համալսարանի կրթական բոլոր աստիճաններում՝ իրականացնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ընդլայնել ընդունելության դոնոր երկրների ցանկը, ծավալել դիմորդների հավաքագրման աշխատանքներ տարածաշրջանի երկրներում՝ անհրաժեշտության դեպքում ստեղծելով ԵՊՀ ներկայացուցչություններ:
2. Քայլեր ձեռնարկել ուսանողների հավաքագրմամբ զբաղվող օտարերկրյա կրթական միջնորդ կազմակերպությունների հետ համագործակցության թույլտվություն ստանալու համար:
3. Համալսարանի կայքում ներկայացնել ԵՊՀ-ում օտարերկրյա ուսանողների ուսումնառության պայմանները, նրանց ուսումնառության ուղեցույցը, ինչպես նաև Համալսարանի ու նրա կրթական ծրագրերի

վերաբերյալ համառոտ տեղեկատու նյութեր:

4. Կատարելագործել նախապատրաստական կրթական ծրագրերը՝ օտարերկրյա դիմորդների լեզվական և ընդհանուր կրթական գիտելիքների մակարդակը ԵՊՀ ծրագրային պահանջներին համապատասխանեցնելու համար:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- ԵՊՀ սովորողների համակազմում օտարերկրյա ուսանողների 4-5 % մասնաբաժին:

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ապահովել Համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել Համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Խնդիր 8.1. Ապահովել Համալսարանի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Նպաստել Համալսարանի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը՝ գիտակրթական ծրագրերին մասնակցության ընդլայնման միջոցով:
2. Յուրաքանչյուր տարի վերանայել ուսման վարձավճարները՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների՝ պայմանավորված շուկայական գործոններով:
3. Ակտիվացնել Համալսարանի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերին:
4. Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ վճարովի ծառայությունները:
5. Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Համալսարանի և նրա ա-

ռանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից Համալսարանին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները:

6. Ուսումնասիրել Համալսարանի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- ԵՊՀ հավասարակշռված բյուջե:
- Բազմազանեցված ֆինանսական մուտքեր:

Խնդիր 8.2. Զարգացնել Համալսարանի ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ներդնել ռիսկերի կառավարման համակարգ՝ շուկայական և տնտեսական տարաբնույթ ռիսկերի նկատմամբ Համալսարանի ռեսուրսների կայունության ապահովման նպատակով:
2. Զարգացնել ֆինանսական ոլորտի հաշվառման տեղեկատվական ցանցային համակարգը՝ ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման օպերատիվության ու արդյունավետության ապահովման նպատակով:
3. Օպտիմալացնել և վերապատրաստել ֆինանսական կառավարմանն առնչվող ստորաբաժանումների կազմը:

4. Մշակել և իրականացնել ռեսուրսախնայողության համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Ռիսկերի կառավարման համակարգ:
- Ֆինանսական ոլորտի վերապատրաստված աշխատողներ:
- Ռեսուրսախնայողության ծրագրեր:

Խնդիր 8.3. Կատարելագործել Համալսարանի իրավական դաշտը և կառավարման համակարգը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Օպտիմալացնել Համալսարանի կազմակերպական կառուցվածքը, բարձրացնել ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը:
2. Մշակել ՀՀ բուհերի կազմակերպական-իրավական ձևի մասին օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների փաթեթ և ներկայացնել ՀՀ ԿԳՆ:
3. Մշակել ՀՀ բուհերի իրավահավասարության ու արդար մրցակցության ապահովման ծրագիր և ներկայացնել ՀՀ ԿԳՆ:
4. Ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել Համալսարանի նոր կանոնադրությանը:
5. Համալսարանի կառավարման համակարգում ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:
6. Ներդնել կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտի համակարգ:
7. Ստեղծել տեղական և արտերկրյա բուհերի հետ ինստիտուցիոնալ համեմատական գնահատման (բենչմարքինգի) համակարգ:

8. Զարգացնել Համալսարանի տեղեկատվական համակարգերը:
9. Բարձրացնել սովորողների ներգրավվածության արդյունավետությունը համալսարանական կառավարման գործընթացներում:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Համալսարանի ստորաբաժանումների և աշխատողների հաշվետվողականության ամբողջականացված համակարգ:
- Վերանայված իրավական ակտեր:
- Գործող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն համակարգ:
- Կառավարման համակարգում ներգրավված վերապատրաստված սովորողներ:

Խնդիր 8.4. Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների նոր ծրագիր:
2. Մեծացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը:
3. Բարձրացնել աշխատողների իրազեկվածության մակարդակը համալսարանական գործընթացների վերաբերյալ, մեծացնել հրապարակայնությունն ու թափանցիկությունը Համալսարանի կառավարման համակարգում:
4. Մշակել և գործածության մեջ դնել «Համալսարանի աշխատողների և ուսանողների էթիկայի կանոնակարգ»:

5. Քննարկել հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրի կատարողականը ԵՊՀ հոգաբարձուների խորհրդում և գիտական խորհրդում:
6. Կազմակերպել հակակոռուպցիոն տեխնոլոգիաների և դրանց կիրառման հմտությունների վերաբերյալ ուսումնական մոդուլներ:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Գիտխորհրդի և հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված՝ ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի կատարողական:
- Աշխատողների և ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացում:

IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:

Խնդիր 9.1. Զարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել միջազգայնացման հայեցակարգ:
2. Մշակել միջազգայնացման գործընթացների գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմ, դրանց հիման վրա երկամյա պարբերականությամբ իրականացնել համեմատական վերլուծություն (բենչմարքինգ):
3. Հստակեցնել միջազգայնացման դերակատարների գործառույթները կառուցվածքային տարբեր մակարդակներում, սահմանել և կիրարկել նրանց խրախուսման մեխանիզմները:
4. Ստեղծել միջազգայնացման աջակցության համացանցային պորտալ և վիրտուալ պլատֆորմ:

5. Իրականացնել միջազգայնացման ոլորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում:
6. Ստեղծել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտ:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Միջազգայնացման գործող հայեցակարգ:
- Միջազգայնացման ցանցային համակարգ և տեղեկատվական բազա:
- 50 հրավիրյալ պրոֆեսոր:

Խնդիր 9.2. Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ներդնել թիրախային օտարալեզու կրթական ծրագրեր և մոդուլներ:
2. Զարգացնել և ընդլայնել ամառային կրթական, մշակութային և ճանաչողական ծրագրերը:
3. Աշխատողների և սովորողների շրջանում բարձրացնել շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության աստիճանը: Խթանել ներգնա և արտագնա շարժունությունը:
4. Զարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ

- Օտար լեզվով գործող ծրագրեր (4 ծրագիր բակալավրիատում և 12-ը՝ մագիստրատուրայում):
- Գործող ծրագրերում ներդնել 50 կամ ընտրական օտարալեզու մոդուլ:
- 10 կրկնակի դիպլոմով մագիստրոսական ծրագիր:
- Շարժունության թվի աճ՝ 20 %-ով:

Հավելված N 1
ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի
2015 թ. դեկտեմբերի 23-ի նիստում
ընդունված N 15 որոշման հավելվածի

**ԵՊՀ գործունեության ներքին ուժեղ և
թույլ կողմերը, արտաքին
հնարավորությունները և վտանգները
(SWOT)**

1. Կրթություն

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Համալսարանի առաքելությանը համահունչ մասնագիտական կրթական ծրագրերի առկայություն: 2. Մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրեր, որտեղ ներկայացված են ծրագրի և դասընթացների նպատակը, կրթական վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդները և ուսումնական պլանի քարտեզը: 3. Կրթական ծրագրերի որակը և շարունակական բարելավումն ապահովող կանոնակարգային և ընթացակարգային հենքի առկայություն: 4. Կրթական ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հասանելիությունը ուսանողությանը և լայն հանրությանը ուսումնառության ուղեցույցների և դասընթացների տեղեկագրքերի միջոցով: 5. Կրկնակի դիպլոմով և արտասահմանյան բուհերի հետ համատեղ մշակված մի շարք կրթական ծրագրերի առկայություն: 6. Ուսանողների գնահատման բազմագործոն համակարգի առկայություն: 7. Ուսումնական գործընթացը կանոնակարգող ներհամալսարանական բոլոր փաստաթղթերի և ընթացակարգերի, ինչպես նաև անհրաժեշտ կառուցվածքային ստորաբաժանումների առկայություն: 8. Նոր կրթական տեխնոլոգիաների մշակման և ներդրման գործող կառույց: 9. Որակի ապահովման ներքին համակարգի և համապատասխան կառույցի առկայություն: | <ol style="list-style-type: none"> 1. Որոշ մասնագիտությունների գծով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը տրամաբանորեն փոխկապակցված չլինելը: 2. Կիրառվող դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ոչ միշտ համահունչ լինելը ակնկալվող կրթական վերջնարդյունքներին: 3. Ակադեմիական բարելավարքության կանոնակարգային հենքի ոչ լիարժեք ապահովվածությունը: 4. Կրթական ծրագրերում. հատկապես բակալավրի աստիճանում, կամընտրական դասընթացների փոքր մասնաբաժինը, ինչը փոքրացնում է անհատական ծրագրերով մասնագիտակու հնարավորությունները: 5. Կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի, գնահատման և պարբերական վերանայման գործընթացների դեռևս ոչ լիարժեք իրականացումը: 6. Մագիստրատուրայում միջմասնագիտական կրթական ծրագրերի սակավությունը: 7. Մագիստրոսի և հատկապես բակալավրի որոշ կրթական ծրագրերում դասավանդման և ուսումնառության մեթոդների՝ ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորմանը միտված չլինելը: 8. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում մասնագիտական պրակտիկաներին քիչ տեղ հատկացված լինելը, նրանց իրականացման էական բարելավման անհրաժեշտությունը: 9. Ուսանողների՝ օտար լեզուների իմացության ցածր մակարդակը: |

| | <p>10. Լեզուների ուսուցման ենթակառուցվածքների (լինգաֆոնային կաբինետ և այլն) բացակայություն:</p> <p>11. Կուրատորների անարդյունավետ աշխատանք:</p> <p>12. Հեռուսուցման ծառայությունների սահմանափակություն:</p> |
|--|--|
| Հնարավորությունները | Վտանգները |
| <ol style="list-style-type: none"> 1. Փոխկապակցել բակալավրի և մագիստրոսի ծրագրերը՝ օգտվելով որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների ընձեռած հնարավորություններից: 2. Հեռավար ուսուցման հնարավորությունների ընդլայնում: 3. Գործատուների և մյուս շահակիցների հետ համագործակցության ընդլայնում՝ կրթական ծրագրերի մշակման և իրականացման, արտաքին փորձաքննության, ինչպես նաև պրակտիկաների իրականացման գործընթացներում: 4. Միջբուհական համագործակցության զարգացում ազգային և միջազգային մակարդակներում՝ միջմասնագիտական համատեղ ծրագրերի իրականացման նպատակով: 5. Միջազգային դրամաշնորհային ծրագրերի հնարավորությունների օգտագործում՝ կրթական գործընթացների արդիականացման նպատակով: | <ol style="list-style-type: none"> 1. Պետական ֆինանսավորման ոչ բավարար մակարդակը: 2. Կրթությանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի անկատարությունը: 3. Շրջանավարտների թվի և աշխատաշուկայի պահանջարկի շարունակական անհամապատասխանությունը: 4. Արտաքին շահակիցների և հատկապես գործատուների ոչ բավարար մոտիվացվածությունը և ներգրավումը բուհական կրթական գործընթացներում: 5. Բոլոնիայի գործընթացի և նորաստեղծ Եվրասիական տնտեսական միության կրթական համակարգի միջև հնարավոր հակասությունների առաջացում: |

2. Մարդկային ռեսուրսներ

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Դասախոսական կազմի ընտրության, մասնագիտական կատարելագործման և առաջխաղացման ապահովման միասնական քաղաքականության առկայություն: 2. Դասախոսների որակավորման բարձրացման մասնագիտացված կառույցի և երկարամյա փորձի առկայություն: 3. Դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրեդիտային համակարգով կրթագիտական ծրագրի իրականացում: 4. Դասախոսական կազմի տարբերակված հավելավճարի մեխանիզմների կիրառում: 5. Դասախոսների պարբերաբար գնահատում ուսանողական հարցումների միջոցով: | <ol style="list-style-type: none"> 1. Ըստ կրթական ծրագրերի՝ դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող ոչ հստակ պահանջներ: 2. Ուսանողական հարցումների արդյունքների ոչ լիարժեք օգտագործում դասախոսների վերապատրաստումներն ավելի հասցեական իրականացնելու համար: 3. Ուսումնական գործընթացում սկսնակ դասախոսների ներգրավումը խթանող մեխանիզմների և մենթորության համակարգի բացակայություն: 4. Դասախոսների բազմագործոն գնահատման համակարգի (ինքնագնահատում, գործընկերների և անմիջական ղեկավարի կողմից գնահատում) բացակայություն: 5. Վարչական և ուսումնաօժանդակ կազմերի պաշտոնների անձնագրերի, որակավորման բարձրացման ծրագրի և ատեստավորման համակարգի բացակայություն: 6. ԵՊՀ աշխատողների համար սոցիալական համապարփակ ծրագրերի բացակայություն: |
| Հնարավորությունները | Վտանգները |
| <ol style="list-style-type: none"> 1. Գիտամանկավարժական կազմի միջազգային ակադեմիական շարժունություն: 2. Գործընկեր բուհերի և կազմակերպությունների հետ կրթական և գիտական համագործակցություն: | <ol style="list-style-type: none"> 1. Բարձրորակ գիտամանկավարժական կադրերի համար արտաքին մրցակցության ուժեղացում: 2. ԵՊՀ-ից կադրերի արտահոսք: 3. Կրթագիտական համակարգի աշխատողների հասարակական կարգավիճակի անկում: |

3. Ընդունելություն

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|--|---|
| <ol style="list-style-type: none"> 1. ԵՊՀ բարձր վարկանիշը, բուհերի միջազգային և տեղական վարկանշավորման աղյուսակներում ԵՊՀ առաջատար դիրքը ՀՀ բուհերի շարքում: 2. Հանրակրթական հաստատությունների և դիմորդների հետ տարվող աշխատանքների արդյունավետ համակարգի առկայություն: 3. Ավագ դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների ընդլայնում՝ հանրակրթական տարբեր առարկաների գծով ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում ամենամյա օլիմպիադաների անցկացում, ամառային դպրոցների կազմակերպում: 4. Համալսարանի և ֆակուլտետների ղեկավարության ու դասախոսական կազմի հետ աշակերտների պարբերաբար հանդիպումների, ուսումնական ծրագրերին և ուսումնառության պայմաններին նրանց ծանոթացնելու նպատակով «Բաց դռների օրեր»-ի և ճանաչողական այցերի կազմակերպում: 5. ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների համար նախապատրաստական դասընթացների կազմակերպման բազմամյա և հարուստ փորձ: 6. Մասնագիտությունների պահանջարկից և ԵՊՀ առկա ներուժից ելնելով՝ ընդունելության ամենամյա պլանավորում, արդյունքների վերլուծություն և բարելավող միջոցառումների առաջադրում: 7. Մովորողների կրթության հասանելիության բավարար մակարդակ, ընդունելության թափանցիկ մեխանիզմների առկայություն, կրթության շարունակականության ապահովում, ընդունելության կանոնակարգով աշխատանքների հստակ կազմակերպում: | <ol style="list-style-type: none"> 1. ԵՊՀ ընդունելությունում օտարերկրյա ուսանողների փոքր մասնաբաժին: 2. Արտերկրի և մարզերի ուսանողների կեցության և կենցաղի կազմակերպման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի բացակայություն: 3. ԵՊՀ կառուցվածքում հենակետային վարժարանների (ավագ դպրոցների) բացակայություն: 4. Օտարալեզու կրթական ծրագրերի բացակայություն: |

| Հնարավորությունները | Վտանգները |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1. ԵՊՀ բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մի շարք մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելության կազմակերպում: 2. Մասնագիտական բարձրորակ աշխատուժի աճող պահանջարկ: 3. Համապատասխան պետական մարմիններից և գործատուներից ստացված տեղեկատվության հիման վրա մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համար խիստ կարևոր միասնական տեղեկատվական համակարգի (շտեմարանի) ձևավորում: 4. Ռազմավարական գործակցություն արտասահմանյան բուհերի հետ՝ համատեղ ծրագրերի և դասընթացների իրականացման նպատակով: | <ol style="list-style-type: none"> 1. Ժողովրդագրական ցուցանիշների անկման պայմաններում հանրակրթական դպրոցների շրջանավարտների թվի զգալի նվազում: 2. Հանրակրթական դպրոցներում կրթության և դաստիարակության մակարդակի շարունակական անկման հետևանքով դիմորդների գիտելիքների խիստ ցածր մակարդակ: 3. Տեղական և օտարերկրյա բուհերի միջև աճող մրցակցություն ընդունելության անհավասար պայմաններում: 4. Բակալավրիատի ընդունելության անվճար տեղերի պլանավորման ոչ արդյունավետ համակարգ: 5. Բուհ-աշխատաշուկա փոխադարձ թույլ կապ: 6. ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների, սփյուռքահայ համայնքների պասիվությունը ՀՀ-ում բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման հարցում: |

4. Հետազոտություն

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|---|---|
| <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ-ում ԵՊՀ առաջատար դիրքը գիտական հրատարակությունների քանակով և գիտահետազոտական ծրագրերի ֆինանսավորման ծավալներով: 2. Գիտահետազոտական ինստիտուտների, կենտրոնների, լաբորատորիաների և տարաբնույթ դրամաշնորհների առկայություն: 3. Հետազոտական դպրոցների պահպանման և զարգացման ռազմավարության առկայություն: 4. ԵՊՀ-ում հրատարակվող գիտական հանդեսներ՝ ըստ բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար և հայագիտական ոլորտների: 5. Բարձրորակ հետազոտական ներուժի առկայություն գիտության տարբեր բնագավառներում: 6. Կայուն գիտական կապեր հանրապետական և արտասահմանյան հետազոտական կենտրոնների հետ: 7. Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների գործունեություն բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական և հումանիտար ոլորտներում: 8. Գիտահետազոտական ստորաբաժանումների տեխնիկական հագեցվածության բարելավման կայուն գործընթաց, նորագույն սարքավորումների ներդրում: | <ol style="list-style-type: none"> 1. Մասնավոր սեկտորի հետ պայմանագրային հետազոտական աշխատանքների ոչ բավարար քանակ: 2. Գիտական փորձարարական բազայի հագեցվածության ոչ բավարար մակարդակ: 3. Հետազոտական աշխատանքներում երիտասարդ դասախոսների և օժտված ուսանողների ներգրավվածության ցածր մակարդակ: 4. Հետազոտական գործունեության արդյունքների փորձագիտական գնահատման (որակի ապահովման) մեխանիզմների բացակայություն: 5. Արտերկրի գիտական կենտրոններում ԵՊՀ երիտասարդ գիտաշխատողների որակավորման բարձրացման համար ֆինանսավորման աղբյուրների բացակայություն: 6. Հետազոտական աշխատանքների և մշակումների առևտրայնացման փորձի (պրակտիկայի) բացակայություն: 7. Միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հումանիտար ոլորտի հրապարակումների սահմանափակ քանակ: |

| Հնարավորությունները | Վտանգները |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից պարբերաբար հայտարարվող մրցույթները և դրամաշնորհները: 2. Միջազգային հետազոտական դրամաշնորհները և համատեղ ծրագրերը: 3. ՀՀ ԳԱԱ հետազոտական ինստիտուտների հետ բազմակողմանի համագործակցությունը: 4. Տարբեր հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների ֆինանսական օժանդակությունը: 5. Մասնավոր սեկտորի հետ համատեղ հետազոտությունների և մշակումների ակտիվացումը: | <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ-ում գիտության ֆինանսավորման խիստ ցածր մակարդակը: 2. Ըստ գիտական ուղղությունների պետական ֆինանսավորման ռազմավարության բացակայությունը: 3. Ոչ պետական կառույցների ցածր շահագրգռվածությունը գիտակրթական կազմակերպությունների հետ աշխատելու հարցում: |

5. Ֆինանսներ և կառավարում

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Ընդունված չափորոշիչներին համապատասխան բյուջեի իրատեսական պլանավորում, կատարում և թափանցիկ վերահսկողություն: 2. Կրթական և հետազոտական բազմազանեցված ծառայությունների մատուցման բազմամյա փորձ: 3. Տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերի միջոցով լրացուցիչ ֆինանսական հոսքերի ապահովում: 4. Գործող ֆինանսական, այդ թվում՝ նյութական ակտիվների, վարձավճարների և դրանց գեղչերի, ինչպես նաև ուսանողների հաշվառման տեղեկատվական ցանցային համակարգեր: 5. Գործում են համահամալսարանական և ֆակուլտետային մակարդակներում իրավասության և լիազորությունների բաշխման, ինչպես նաև հաշվետվողականության հստակ ընթացակարգեր: 6. Իրականացվում է կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագիր: 7. Առկա է ԵՊՀ գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների (ԳԱՅ) համակարգ: 8. Համալսարանի կառավարմանը և որոշումների ընդունման գործընթացին ուսանողների մասնակցությունը ապահովող մեխանիզմներ: | <ol style="list-style-type: none"> 1. Կառավարման բոլոր մակարդակներում չի իրականացվում Պլանավորում-Իրականացում-Ստուգում-Բարելավում շրջափուլի վերջին 2 բաղադրիչը: 2. Լրացուցիչ ֆինանսական հոսքերի ներգրավման ուղղությամբ կառուցվածքային ստորաբաժանումների նախաձեռնության պակաս: 3. Շրջանավարտների, նվիրատու կազմակերպությունների և անհատների ներդրումների փոքր մասնաբաժին: 4. Ռազմավարական բյուջեի, ռիսկերի կառավարման և ներքին աուդիտի ամբողջական համակարգերի բացակայություն: 5. Տնտեսական գործունեության, ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության գնահատման նորմատիվային անբավարար բազա: 6. Տվյալների հավաքագրման, փաստաթղթաշրջանառության և կառավարման միասնական էլեկտրոնային համակարգի բացակայություն: 7. Ինստիտուցիոնալ մակարդակում բենչմարքինգի բացակայություն: |
| Հնարավորությունները | Վտանգները |
| <ol style="list-style-type: none"> 1. Ուսանողների վարձերի վճարման այլընտրանքային աղբյուրների առկայություն: 2. Որպես հիմնադրամ վերակազմակերպվելուց հետո ֆինանսական մուտքերի հնարավորությունների ընդլայնում: 3. Միջազգային դրամաշնորհային ծրագրերի հնարավորությունների օգտագործում: 4. Կառավարման արդյունավետության բարձ- | <ol style="list-style-type: none"> 1. Կրթական ոլորտի օրենսդրության անկատարությունը: 2. Պետական ֆինանսավորման ոչ բավարար մակարդակը: 3. ՀՀ բնակչության եկամուտների ցածր մակարդակը: 4. Ֆինանսավորման այլընտրանքային վարկային ռեսուրսների բարձր տոկո- |

| | |
|--|---|
| <p>րացման և ֆինանսական մուտքերի բազմա- զանեցման ոլորտում փորձի փոխանակում:</p> | <p>սաղրույթները:</p> <p>5. Շուկայական գների անկայունության հնարավոր ազդեցությունը ուսանողնե- րի հետ կնքած երկարաժամկետ պայ- մանագրերի կատարման վրա:</p> |
|--|---|

6. Միջազգայնացում և գործակցություն

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Ինստիտուցիոնալ և ֆակուլտետային մակարդակներով միջազգային համագործակցության բազմամյա փորձ: 2. Միջազգայնացման աշխատանքները համակարգող մասնագիտացված կառույց՝ արտերկրում պարբերաբար վերապատրաստվող աշխատակազմով: 3. Միջազգայնացմանը նպաստող ծրագրերի և դրանցում ընդգրկված գործընկերների թվի կայուն աճ: 4. Արտերկիր գործուղվող աշխատողների և սովորողների թվի աճ: 5. Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրերում ներառված օտար լեզուների իմացության բարելավման պահանջ: 6. Պարբերաբար կազմակերպվող միջազգային գիտաժողովներ, ընդլայնվող միջազգային գիտական կապեր: | <ol style="list-style-type: none"> 1. Միջազգայնացման երկարաժամկետ քաղաքականության բացակայություն: 2. Ֆակուլտետների և միջին օղակի դեկավարների ոչ բավարար ներգրավվածություն միջազգայնացման գործընթացներում: 3. Օտար լեզուներով իրականացվող կրթական ծրագրերի սակավություն: 4. Անձնակազմի և ուսանողների՝ օտար լեզուների իմացության ոչ բավարար մակարդակ: 5. Ուսանողների և դասախոսների միջազգային ակադեմիական շարժունության ոչ բավարար մակարդակ: 6. Տարածաշրջանային գիտակրթական համագործակցության ոչ բավարար ակտիվություն: 7. Միջազգային ինստիտուցիոնալ բենչմարքինգի բացակայություն: 8. Ուսանողների համար միջազգային փոխանակումների, արտերկրում կրթական ծրագրերին մասնակցելու խորհրդատվական ծառայությունների բացակայություն: |
| Հնարավորությունները | Վտանգները |
| <ol style="list-style-type: none"> 1. Տարածաշրջանում օտարերկրյա պոտենցիալ դիմորդների թվի աճ: 2. Միջազգային կրթական, հետազոտական և ծրագրերում ընդգրկվածության ակտիվացում: 3. Համաշխարհային շուկայում որակյալ աշխատուժի ազատ տեղաշարժի հնարավորությունների օգտագործում: | <ol style="list-style-type: none"> 1. Բուհերի միջազգայնացմանը նպաստող պետական անբավարար աջակցություն: 2. Դրամաշնորհային ծրագրերի համար աճող մրցակցություն տեղական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում: |

7. Հանրային ներգրավում և ծառայություններ

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1. ԵՊՀ-ի առանձնահատուկ (մայր բուհի) կարգավիճակի հանրային ընկալումը: 2. Պետական և միջազգային ձևաչափի տարաբնույթ (սոցիալական, բարեգործական, մշակութային, գիտական, կրթական) միջոցառումներում ԵՊՀ-ի ակտիվ ներգրավվածությունը: 3. ԵՊՀ-ում հանրային կապերի և հաղորդակցության կառավարման ձևավորված ու կայացած համակարգ: 4. Ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգի առկայություն: 5. Տեղեկատվության տարածման տպագիր և առցանց ձևերի և միջոցների բազմազանություն, հարուստ ռեսուրսներով պաշտոնական կայք: 6. Մոնիթորինգային հետազոտությունների ձևավորված համակարգ (ԵՊՀ-ի մասին հրապարակված նյութերի մշտադիտարկում, ԵՊՀ իմիջի ընկալման վերաբերյալ հետազոտություններ և այլն): 7. PR և մարքեթինգային նյութերի առկայություն: 8. Լրացուցիչ և շարունակական կրթության ձևավորված համակարգ՝ ծրագրերի հարուստ տեսականիով և ուսուցման ձևերի բազմազանությամբ: 9. ՀՀ պետական կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ գործընկերային կապերի առկայություն: 10. Ուսումնական պլանով չնախատեսված լրացուցիչ կրթության հնարավորություններ (դասընթացներ, սեմինարներ և այլն): | <ol style="list-style-type: none"> 1. Կառուցվածքային ստորաբաժանումների սակավ ներգրավվածությունը ԵՊՀ PR գործունեության մեջ: 2. Միասնական մարքեթինգային համակարգի և դրա արդյունավետության գնահատման ցուցանիշների բացակայություն: 3. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգի և գործառույթների բացակայություն: 4. Հասարակության լայն շերտերից հետադարձ կապի անհրաժեշտ գործիքների, այդ թվում՝ առցանց հարցումների սակավություն: 5. Արդյունավետ ճգնաժամային PR համակարգի բացակայություն: 6. Տարբեր ստորաբաժանումներում իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերի համակարգման բացակայություն, առաջարկվող ծրագրերի սակավություն: 7. Շրջանավարտ-համալսարան գործունե կապի բացակայություն: |

| Հնարավորություններ | Վտանգներ |
|---|---|
| <ol style="list-style-type: none"> 1. ՁԼՄ-ների կողմից մշտական ուշադրությունը մայր բուհի գործունեությանը: 2. Հանրային կապերի ստորաբաժանման համագործակցության ակտիվացումը արտաքին շահակիցների հետ: 3. ԵՊՀ ներգրավվածության ակտիվացումը տարբեր ձևաչափերի հանրային միջոցառումներում: 4. Պետական, մասնավոր, միջազգային, արտերկրյա տարբեր հաստատությունների, տարաբնույթ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունավետության բարձրացումը: 5. Շրջանավարտների հետ կապի ընդլայնում: | <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ-ում տեղի ունեցող հասարակական-քաղաքական մի շարք գործընթացների բացասական ազդեցությունն ու անդրադարձը ԵՊՀ գործունեության վրա: 2. ԵՊՀ-ի նկատմամբ լրատվամիջոցների կողմից հաճախակի արտահայտվող սուբյեկտիվ վերաբերմունքը: 3. Հասարակության առանձին խմբերի կողմից ԵՊՀ գործունեության ընկալումն ու ներկայացումը ՀՀ կրթական համակարգում առկա բացասական երևույթների համատեքստում: 4. Լրացուցիչ կրթության կազմակերպման օրենսդրական հենքի անկատարություն: 5. Լրացուցիչ կրթության նկատմամբ հանրային պահանջարկի ու առաջարկի անհամապատասխանություն: |

8. Ենթակառուցվածքներ

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|--|---|
| <ol style="list-style-type: none"> 1. Լաբորատորիաների վերանորոգման և վերազինման առաջանցիկ տեմպեր: 2. Վերանորոգված մասնաշենքեր (կենտրոնական, N 2, 5, 7, 8 մասնաշենքեր): Յուրաքանչյուր տարի մասնաշենքերի վերանորոգման համար միջոցների հատկացում տարեկան ծախսերի նախահաշվում: 3. Ոսումնաարտադրական բազաների (Դիլիջան, Հանքավան և Բյուրական) և Հյուրերի տան առկայություն: 4. Միասնական օպտիկամալուխային ցանց և հզոր սերվերային համակարգ, համակարգչային սարքավորումներով հագեցվածություն: Ժամանակակից ներքին հեռախոսակայան: 5. Տեղեկատվական համակարգերի սպասարկման, շահագործման և զարգացման կադրային անհրաժեշտ ներուժ: 6. Ուսումնական գործընթացի կազմակերպման և կառավարման համակարգի, աշխատողների և սովորողների էլփոստի բազաների և այլ համակարգերի առկայություն: 7. Հարուստ գրադարան, գրականության մշտական թարմացման գործընթաց, գիտակրթական էլեկտրոնային ռեսուրսների բաժանորդագրություն, միասնական քարտարան: 8. Ատամնաբուժարանի առկայություն: | <ol style="list-style-type: none"> 1. Մարզահամալիրի, Դիլիջանի, Հանքավանի և Բյուրականի բազաների անբավարար վիճակ, դեռևս չվերանորոգված մի քանի մասնաշենքեր: 2. Տարածքի սահմանափակություն: 3. Հանրակացարանի բացակայություն: 4. Ընդհանուր տարածքի և մասնաշենքերի մուտքի/ելքի վերահսկողության համակարգերի անբավարար տեխնիկական հագեցվածություն: 5. Հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար մասնաշենքերի անհասանելիություն: 6. Տարածքի և մասնաշենքերի լուսավորության և օդափոխության խնդիրներ: 7. Բուժկետի ծառայության անբավարար մակարդակ: 8. Նիստերի դահլիճների տեխնիկական թույլ հագեցվածություն (ձայնային և լուսային տեխնիկայի, սինքրոն թարգմանության համակարգի բացակայություն): 9. Հանրային սննդի սպասարկման ենթակառուցվածքների անբավարար աշխատանք: 10. Սանհանգույցների անբավարար քանակ և զգալի մասի անբավարար վիճակ: |

| | |
|--|---|
| | <p>11. Գրադարանային ֆոնդի ամբողջական էլեկտրոնային բազայի բացակայություն և էլեկտրոնային սպասարկման համակարգի մասնակի շահագործում:</p> <p>12. Գրադարանի երկու ընթերցասրահների, գրապահոցի անբավարար վիճակ, ջեռուցման, լուսավորման, օդափոխման խնդիրներ:</p> <p>13. Վերանորոգման, շինարարության, կահավորման տեխնիկական ժամանակակից չափանիշներին անհամապատասխանություն:</p> |
| Հնարավորությունները | Վտանգները |
| <p>1. Ենթակառուցվածքների զարգացման ավստրիական ֆինանսական կառույցի արտոնյալ վարկային ծրագիր:</p> <p>2. Համալսարանական մարզահամալիրի և Դիլիջանի ուսումնասարտադրական բազայի վերակառուցում հովանավորների աջակցությամբ:</p> <p>3. Ուսումնասարտադրական բազաների շահագործում՝ ինքնաֆինանսավորում ապահովելու նպատակով:</p> | <p>1. Ֆինանսական դժվարությունների պատճառով վերանորոգման, կառուցապատման, տեխնիկայի և գույքի ձեռքբերման հնարավորությունների սահմանափակում:</p> |

9. Որակյալ ծառայություններ

| Ուժեղ կողմերը | Թույլ կողմերը |
|--|---|
| <ol style="list-style-type: none"> 1. Մովորողներին ծառայություններ մատուցող կառույցների առկայություն: 2. Մոցիալական և ժամանցային ծրագրերի առկայություն (ամառային և ձմեռային հանգիստ, ճանաչողական էքսկուրսիաներ, արշավներ, ճամբարներ և այլն): 3. Ուսման վարձերի զեղչերի և կրթաթոշակների կանոնակարգված համակարգի առկայություն: 4. Ուսանողական հետազոտական աշխատանքները խթանող կառույցներ և համապատասխան մեխանիզմներ: 5. Գրադարանի կողմից մատուցվող ծառայություններ (էլեկտրոնային գրականություն, առձեռն ֆոնդ, ընթերցասրահներ): 6. Գիտակրթական և մշակութային կենտրոնների կողմից մատուցվող ծառայություններ: 7. Համակարգչային սրահների, անլար ինտերնետ կապի հասանելիություն: 8. Ուսանողների համար մատչելի տեղեկատվություն (1-ին կուրսեցու ուղեցույց, պորտալ, էլփոստի համակարգ, թերթ և այլն): | <ol style="list-style-type: none"> 1. Կրթական կարիքների վերհանման ներքին մեխանիզմների բացակայություն: 2. Լրացուցիչ պրակտիկայի (ինտերշիփ) սահմանափակ հնարավորություններ: 3. Գրադարանի աշխատաժամերի սահմանափակություն: 4. Ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու ընթացակարգերի ոչ ամբողջական համակարգ: 5. Որոշ մասնաշենքերում համակարգչային սրահների անբավարար վիճակ, դրանց օգտագործման սահմանափակ հնարավորություն: 6. Մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և գնահատման համակարգի բացակայություն: |
| Հնարավորություններ | Վտանգներ |
| <ol style="list-style-type: none"> 1. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և այլ դրամաշնորհային, բարեգործական ծրագրերի իրականացում: 2. Ձեռնարկությունների հետ համագործակցության ընդլայնում: | <ol style="list-style-type: none"> 1. Մոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման արդյունքում մատուցվող ծառայությունների նվազում: |

Հավելված N 2

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի
2015 թ. դեկտեմբերի 23-ի նիստում
ընդունված N 15 որոշման հավելվածի

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի
իրականացման ժամանակացույց-պլան

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տրամադրել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ միտված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ-ում ստացած կրթությունից:

Խնդիր 1.1. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|--|---------------|---|---|--|
| 1. Վերանայել մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը (առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար): | 01-07.2016 | Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Որակի ապահովման կենտրոն Ուսումնամեթոդական վարչություն | - | Գիտխորհրդի կողմից հաստատված 4 նորմատիվ փաստաթուղթ: |

| | | | | |
|--|------------------------|--|--------------------|--|
| <p>2. Վերամշակել մագիստրոսի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:</p> | <p>09.2016-04.2017</p> | <p>Ուսումնամեթոդական վարչություն Որակի ապահովման կենտրոն Ֆակուլտետներ Կենտրոններ</p> | <p>-</p> | <p>Մագիստրատուրայի շուրջ 120 վերամշակված ծրագիր՝ համապատասխան մասնագրերով:</p> |
| <p>3. Ստեղծել բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»՝ ծրագրի պատշաճ մշակման և իրականացման նպատակով:</p> | <p>09-10.2016</p> | <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն Ֆակուլտետներ</p> | <p>-</p> | <p>Ղեկավարներ՝ բակալավրի յուրաքանչյուր ծրագրի համար:</p> |
| <p>4. Վերամշակել բակալավրի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:</p> | <p>09.2016-09.2017</p> | <p>Ուսումնամեթոդական վարչություն Որակի ապահովման կենտրոն Ֆակուլտետներ</p> | <p>-</p> | <p>Բակալավրիատի շուրջ 50 վերամշակված ծրագիր՝ համապատասխան մասնագրերով:</p> |
| <p>5. Մշակել և իրականացնել միջմասնագիտական մագիստրոսական նոր ծրագրեր:</p> | <p>09.2016-12.2020</p> | <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն Որակի ապահովման կենտրոն Ֆակուլտետներ Կենտրոններ</p> | <p>20 մլն դրամ</p> | <p>Միջմասնագիտական մագիստրոսական 8 նոր ծրագիր:</p> |

| | | | | |
|--|------------------------|--|---------------------|--|
| <p>6. Վերանայել կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերը:</p> | <p>01-06.2017</p> | <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Որակի ապահովման կենտրոն Ուսումնամեթոդական վարչություն</p> | <p>-</p> | <p>Գիտխորհրդի կողմից հաստատված ուսումնական գործընթացի կազմակերպման 2 վերամշակված կարգ:</p> |
| <p>7. Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ:</p> | <p>09.2016-12.2020</p> | <p>Ռեկտոր Պրոռեկտորներ Ուսումնամեթոդական վարչություն Ֆակուլտետներ</p> | <p>100 մլն դրամ</p> | <p>Պրակտիկաների անցկացման կանոնակարգված և բարելավված գործընթաց:</p> |

Խնդիր 1.2. Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|--|-----------------|--|---|---|
| 1. Ստեղծել դասավանդման և ուսումնառության աջակցման կենտրոն՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտությունները արդիականացնելու ու զարգացնելու նպատակով: | 01.2017-12.2020 | Որակի ապահովման կենտրոն Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն | Դրամաշնորհային ծրագիր | Գործող կենտրոն: |
| 2. Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը: | 01.2016-12.2020 | Ռեկտոր Պրոռեկտորներ Որակի ապահովման կենտրոն Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն Ֆակուլտետներ | Համապատասխան ֆինանսավորում | Հաջողված փորձի տարածման օրինակներ: Մրցանակներ՝ խրախուսման նպատակով: Պարբերական սեմինարներ՝ դասավանդման փորձի փոխանակման նպատակով: |
| 3. Կրթափորձի կարգով ներդնել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ: | 09.2019-12.2020 | Որակի ապահովման կենտրոն Ֆակուլտետներ | - | Համապատասխան մեթոդական ձեռնարկներ: Երկու ֆակուլտետներում փորձարկման արդյունքներ: |

| | | | | |
|--|------------------------|--|--------------------|--|
| <p>4. Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:</p> | <p>01.2016-12.2020</p> | <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Ռրակի ապահովման կենտրոն Ֆակուլտետներ Ուսանողական գիտական ընկերություն</p> | <p>-</p> | <p>Բենչմարքինգի հաշվետվություններ: Ուսումնառության և հետազոտության ինտեգրման 4 պիլոտային ծրագրի իրականացում և արդյունքների վերլուծություն:</p> |
| <p>5. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսությունների) գրագողությունը կանխելու նպատակով:</p> | <p>01.2016-12.2018</p> | <p>Ռեկտոր Պրոռեկտորներ Ուսումնամեթոդական վարչություն Ֆակուլտետներ</p> | <p>30 մլն դրամ</p> | <p>Գործող ծրագրային ապահովում և կանոնակարգ:</p> |

Խնդիր 1.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|--|-----------------|---|---|--|
| 1. Փորձնական սկզբունքով ստեղծել մի շարք կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար: Հաջողված փորձը տարածել բոլոր ծրագրերում: | 01-09.2016 | Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին Ուսխորհուրդ Ֆակուլտետային ուսխորհուրդներ | - | Գործող ուսանողական հանձնաժողովներ բակալավրի որոշ կրթական ծրագրերի համար: |
| 2. Գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը մագիստրոսի ծրագրերի համար: | 09.2019-12.2020 | Որակի ապահովման կենտրոն Ֆակուլտետներ Կենտրոններ | - | Մշտադիտարկման (մոնիթորինգի) համապատասխան զեկույցներ: |
| 3. Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում: | 01.2017-06.2019 | Ռեկտոր Պրոռեկտորներ Որակի ապահովման կենտրոն Ֆակուլտետներ Կենտրոններ | - | Գիտլսխորհրդի կողմից հաստատված կարգ և գնահատման զեկույցներ: |

| | | | | |
|--|------------------------|---|-------------------|--|
| <p>4. Գործադրել դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգը:</p> | <p>09.2016-12.2020</p> | <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Որակի ապահովման կենտրոն Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն</p> | <p>-</p> | <p>Դասընթացների և ծրագրերի գնահատման պորտալ:</p> |
| <p>5. Նախաձեռնել և իրականացնել ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթաց:</p> | <p>01-12.2020</p> | <p>Ռեկտոր Պրոռեկտորներ Որակի ապահովման կենտրոն</p> | <p>-</p> | <p>Ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույց:</p> |
| <p>6. Նախապատրաստել և առցանց եղանակով իրականացնել ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, ինչպես նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները:</p> | <p>01.2016-12.2017</p> | <p>Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն Որակի ապահովման կենտրոն Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն</p> | <p>5 մլն դրամ</p> | <p>Առցանց եղանակով անցկացվող հարցումներ:</p> |

Խնդիր 1.4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|---|-----------------------------------|---|---|---|
| 1. Ներդնել և շահագործել վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար: | 01-07.2016 02.2017-12.2020 | Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն Ուսումնամեթոդական վարչություն Ֆակուլտետներ Ինստիտուտներ Կենտրոններ | 20 մլն դրամ | Գործող և սպասարկվող վեբ-ուսուցման համակարգ: |
| 2. Ձևավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար: | 09.2016-01.2017 | Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն Որակի ապահովման կենտրոն | - | Ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման ղեկավար ձեռնարկ: Համակարգից օգտվելու ուղեցույց: |

| | | | | |
|--|-----------------|---|-------------|---|
| 3. Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար: | 02.2017-12.2020 | Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն Ֆակուլտետներ | 10 մլն դրամ | 300 վերապատրաստված դասախոս: |
| 4. Ներդնել խրախուսման մեխանիզմներ՝ դասավանդման գործընթացում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար: | 01-06.2018 | Ռեկտոր Պրոռեկտորներ | - | Համապատասխան կանոնակարգերում խրախուսման վերաբերյալ ցուցանիշների առկայություն: |
| 5. Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով: | 09.2018-12.2020 | Ուսումնամեթոդական վարչություն Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն Ֆակուլտետներ | - | Առնվազն 500 դասընթաց՝ համալրված էլեկտրոնային ռեսուրսներով: |
| 6. Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով: | 01.2016-12.2020 | Ուսումնամեթոդական վարչություն Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն Ֆակուլտետներ | - | Էլեկտրոնային ռեսուրսներով ապահովված հեռակա ուսուցման դասընթացներ: |

| | | | | |
|--|---------------------------------------|---|--------------------|--|
| <p>7. Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները:</p> | <p>01-06.2016 09.2016-12.2020</p> | <p>Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն Որակի ապահովման կենտրոն Ուսումնամեթոդական վարչություն Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն Ֆակուլտետներ Ինստիտուտներ Կենտրոններ</p> | <p>15 մլն դրամ</p> | <p>Համապատասխան կանոնակարգ: Առցանց 3 նոր դասընթաց:</p> |
|--|---------------------------------------|---|--------------------|--|

Խնդիր 1.5. Ստեղծել լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|---|-----------------|---|---|---|
| 1. Մշակել լեզուների ուսուցման նոր հայեցակարգը, Կենտրոնի կանոնադրությունը և ԵՊՀ այլ ստորաբաժանումների հետ փոխգործակցության մեխանիզմները: | 01.2016-06.2017 | Ռեկտոր Աշխատանքային խումբ | - | Գիտխորհրդի կողմից հաստատված հայեցակարգ և կանոնադրություն: |
| 2. Մշակել Կենտրոնի ծրագրային մեթոդական հենքը՝ լեզուների բազմամակարդակ ուսուցման համար: | 09.2016-06.2017 | Համապատասխան ամբիոններ Աշխատանքային խումբ | - | Լեզուների ուսուցման հաստատված ծրագրեր: |
| 3. Կազմակերպել օտար լեզուների դասընթացներ և հետագա թեստավորում (հավաստագրում)՝ ԵՊՀ և/կամ միջազգային վկայագրերի տրամադրմամբ: | 09.2017-12.2020 | Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն Լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն | - | Տարբեր մակարդակների գործող դասընթացներ: |
| 4. Կազմակերպել հայոց լեզվի դասընթացներ օտարերկրյա քաղաքացիների համար՝ ԵՊՀ վկայագրերի տրամադրմամբ: | 09.2017-12.2020 | Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն Լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն | - | Տարբեր մակարդակների գործող դասընթացներ: |

II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը, համապատասխանեցնել ասպիրանտական կրթության չափանիշները համաեվրոպական պահանջներին:

Խնդիր 2.1. Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|---|-----------------|--|---|--|
| 1. Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով: | 01.2017-12.2020 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Դեկաններ Ինստիտուտների տնօրեններ | - | Գործող գնահատման ցուցանիշների սանդղակ: |
| 2. Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրատարակումները խրախուսելու համար: | 01.2016-12.2020 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գիտակազմակերպական բաժին | 60 մլն դրամ | Ազդեցության գործակցով ամսագրերում հրատարակվող հոդվածների քանակի ավելացում: |

| | | | | |
|---|-----------------|---|--------------|--|
| 3. Ապահովել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցության ընդլայնում: | 01.2016-12.2020 | Գիտակազմակերպական բաժին Ֆակուլտետներ Ինստիտուտներ Գիտական կենտրոններ | - | Գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը կազմում է գիտական ծրագրերի մասնակիցների թվի 20 %-ը: |
| 4. Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը: | 01.2016-12.2020 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Դեկաններ ՈւԳԸ | 20 մլն դրամ | ՈւԳԸ աշխատանքներում ներգրավված դասախոսների և ուսանողների թվի աճ: |
| 5. Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում: | 01.2016-12.2020 | Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն Ֆակուլտետներ | - | Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում բարելավված հետազոտական բաղադրիչ: |
| 6. Ստեղծել Start-Up լաբորատորիաներ՝ բնագիտական ֆակուլտետների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում նորարարական հետազոտությունները խթանելու նպատակով: | 01.2016-12.2020 | Ռեկտոր Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր | 120 մլն դրամ | Առնվազն 5 գործող Start-Up լաբորատորիա բնագիտական ֆակուլտետներում: |

Խնդիր 2.2. Զարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|---|-----------------|--|---|---|
| 1. Ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում: | 09.2016-12.2020 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն Ինստիտուտներ Գիտական կենտրոններ Ասպիրանտուրայի բաժին Ամբիոններ | - | Մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում առաջատար գիտաշխատողների կայուն ներգրավվածություն: |
| 2. Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը: | 01.2016-12.2020 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Ֆակուլտետներ Ինստիտուտներ | Համապատասխան ֆինանսավորում | Համատեղ հետազոտական ծրագրերի թվի աճ: |

| | | | | |
|--|------------------------|--|----------|---|
| <p>3. Նպաստել ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը:</p> | <p>01.2016-12.2020</p> | <p>Գիտական խորհրդին կից Ձեռնարկությունների հետ համագործակցության հանձնաժողով Ֆակուլտետներ Ինստիտուտներ</p> | <p>-</p> | <p>Ձեռնարկությունների մասնակցությամբ հետա- զոտական և կրթական ծրագրերի թվի աճ:</p> |
|--|------------------------|--|----------|---|

Խնդիր 2.3. Խթանել Համալսարանի հետազոտական գործունեության միջազգայնացումը:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|--|-----------------|--|---|---|
| 1. Ամրագրել հետազոտական գործունեության միջազգայնացումը՝ որպես ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանման գործունեության անհրաժեշտ բաղադրիչ: | 01.2017-12.2020 | Ստորաբաժանումների ղեկավարներ | - | Ստորաբաժանումների հաշվետվություններում միջազգայնացման գործընթացների ներառումը: |
| 2. Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում Համալսարանի աշխատողների հրապարակումները: | 01.2017-12.2020 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Գիտակրթական ստորաբաժանումների ղեկավարներ | 20 մլն դրամ | Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում Համալսարանի աշխատողների հրապարակումների թվի աճ: |
| 3. Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թիվը: | 01.2017-12.2020 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր | 10 մլն դրամ | Օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թվի աճ: |
| 4. Շարունակել կազմակերպել միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին ԵՊՀ աշխատողների մասնակցությամբ: | 01.2016-12.2020 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Միջազգային համագործակցության վարչություն Ինստիտուտներ | 40 մլն դրամ և արտաքին ֆինանսավորում | ԵՊՀ-ում միջազգային գիտաժողովների կազմակերպում, արտասահմանյան գիտաժողովներին ԵՊՀ աշխատողների մասնակցության աճ: |

| | | | | |
|---|------------------------|--|--|--|
| <p>5. Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականությանն ու խորացմանը:</p> | <p>01.2016-12.2020</p> | <p>Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Միջազգային համագործակցության վարչություն Գիտակրթական ստորաբաժանումներ</p> | <p>60 մլն դրամ և արտաքին ֆինանսավորում</p> | <p>Համատեղ հետազոտական աշխատանքների թվի ավելացում:</p> |
|---|------------------------|--|--|--|

Խնդիր 2.4. Համալսարանում բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի չափանիշները համապատասխանեցնել Զայցբուրգյան սկզբունքներին:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|---|-----------------|---|---|---|
| 1. Կատարելագործել ասպիրանտական կրթությունը՝ որպես կարևոր բաղադրիչ ընդունելով հետազոտությունների միջոցով նոր գիտելիքի ստեղծումը: | 01.2016-12.2017 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Ասպիրանտուրայի բաժին | - | Մշակված և ներդրված համապատասխան կարգեր: |
| 2. Մշակել և ներդնել ասպիրանտի ղեկավարման և մասնագիտական առաջընթացի գնահատման նոր գործընթաց՝ հիմնված ասպիրանտի, նրա ղեկավարի և Համալսարանի միջև հստակ պայմանագրային պարտավորությունների վրա: | 01-12. 2016 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Ասպիրանտուրայի բաժին | - | Գիտխորհրդի կողմից հաստատված համապատասխան կանոնակարգ: |
| 3. Նպաստել ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցությանը: | 01.2016-12.2020 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Միջազգային համագործակցության վարչություն | - | Ասպիրանտների միջմասնագիտական և միջգերատեսչական համագործակցության ավելացում: |

| | | Ֆակուլտետներ Ինստիտուտներ Կենտրոններ Գիտական ղեկավարներ | | |
|--|-----------------|---|-------------|--|
| 4. Ապահովել որակյալ ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր: | 01.2016-12.2020 | Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Ասպիրանտուրայի բաժին Գիտական ստորաբաժանումների ղեկավարներ | 22 մլն դրամ | Համապատասխան հետազոտական միջավայրի ապահովում՝ անհրաժեշտ պայմաններով: |

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զարգացնել հանրային ներգրավման և ծառայությունների համակարգը, իրֆանել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը:

Խնդիր 3.1. Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|---|-----------------|---|---|---|
| 1. Վերանայել ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգը: | 01.-12.2016 | Ռեկտոր Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն | - | Հաստատված նոր հայեցակարգ: |
| 2. Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը: | 01.2016-12.2020 | Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն | 10 մլն դրամ | Արդյունավետ հանրային կապերի միասնական համակարգ՝ ֆակուլտետների հասարակայնության հետ կապերի պատասխանատուների ներգրավմամբ: |

| | | | | |
|--|-----------------|--|---|---|
| | | Ֆակուլտետների հասարակայնության հետ կապերի պատասխանատուներ | | |
| 3. Ապահովել ինտերնետային պորտալի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները: | 01.2016-12.2020 | Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն | - | Համացանցային տարբեր հարթակներում ակտիվ հաղորդակցություն, մոբայլ հավելվածներ: |
| 4. Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել գովազդային նյութերը: | 01.2016-12.2018 | Ռեկտոր Պրոռեկտորներ Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն Մինչհամալսարանական կրթության վարչություն Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն | - | Հաստատված մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և գովազդային արտադրանքի ավելացում: |
| 5. Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը: | 01.2016-12.2020 | Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն Ֆակուլտետների հասարակայնության հետ կապերի պատասխանատուներ | - | Հետադարձ կապի և մշտադիտարկման նոր գործիքներ: |

| | | | | |
|--|------------------------|---|--------------------|---|
| <p>6. Մշակել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգ, ընդլայնել և զարգացնել Համալսարանի ներգրավումը համազգային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները:</p> | <p>01.2016-12.2020</p> | <p>Ռեկտոր Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն Մոցիոլոգիայի ֆակուլտետ</p> | <p>45 մլն դրամ</p> | <p>Հաստատված կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգ, սոցիալական նախաձեռնությունների և մատուցվող ծառայությունների ավելացում:</p> |
| <p>7. Բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունը:</p> | <p>01.2016-12.2020</p> | <p>Ռեկտոր Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն Արհեստակցական կազմակերպություն</p> | <p>-</p> | <p>Կորպորատիվ արդյունավետ հաղորդակցություն:</p> |
| <p>8. Գրահրատարակչական գործունեության արդյունքները առավելագույնս նպատակաուղղել հանրային ծառայությունների մատուցմանը:</p> | <p>01.2016-12.2020</p> | <p>Ռեկտոր Գրահրատարակչական խորհուրդ ԵՊՀ հրատարակչություն</p> | <p>15 մլն դրամ</p> | <p>Հանրային լայն օգտագործման գրականության և գրքերի նվիրատվություններ:</p> |

Խնդիր 3.2. Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|---|-------------------|---|---|--|
| 1. Ուսումնասիրել լրացուցիչ կրթության հանրային պահանջարկը և պարբերաբար իրականացնել շուկայում առկա լրացուցիչ կրթական ծրագրերի մշտադիտարկում: | 09.2016 - 12.2020 | Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն | - | Ուսումնասիրությունների և մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվություններ: |
| 2. Մշակել լրացուցիչ կրթության հայեցակարգ՝ ապահովելու Համալսարանի ծրագրերի մրցունակությունը: | 01 -10.2017 | Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն | - | Հաստատված լրացուցիչ կրթության հայեցակարգ: |
| 3. Մշակել հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը: | 11.2017 - 12.2020 | Ձեռնարկությունների հետ համագործակցության հանձնաժողով Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն Ֆակուլտետներ | - | Մշակված նոր ծրագրեր: |
| 4. Բարձրացնել լրացուցիչ կրթության ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը: | 01- 03.2016 | Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն | - | Լրացուցիչ կրթության ինտերնետային կայք: |

IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Զարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը:

Խնդիր 4.1. Զարգացնել դասախոսական կազմի ներուժը:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|--|------------------|--|---|---|
| 1. Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը: | 01 - 06.2016 | Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն Ֆակուլտետներ | - | Գիտխորհրդի կողմից հաստատված ծրագիր: |
| 2. Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ: | 09 - 12.2016 | Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն Ֆակուլտետներ | - | Վերապատրաստման գործող դասընթացներ: |
| 3. Մահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների: | 09.2016 -09.2017 | Որակի ապահովման կենտրոն Ֆակուլտետներ | - | Կրթական ծրագրերի մասնագրերում համապատասխան պահանջներ: |

| | | | | |
|--|--------------|--|---|-------------------------------------|
| 4. Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը: | 09 - 12.2016 | Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ուսումնամեթոդական վարչություն | - | Գիտխորհրդի կողմից հաստատված նորմեր: |
|--|--------------|--|---|-------------------------------------|

Խնդիր 4.2. Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|--|-----------------|--|---|---|
| 1. Մշակել մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգ: | 01-12.2016 | Ռեկտոր Պրոռեկտորներ Աշխատանքային խումբ | - | Գիտխորհրդի կողմից հաստատված հայեցակարգ: |
| 2. Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր: | 01.2017-12.2018 | Ռեկտոր Պրոռեկտորներ | 10 մլն դրամ | Համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում և արհեստավարժ աշխատակազմ: |
| 3. Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար: | 01-12.2016 | Ռեկտոր Պրոռեկտորներ Կադրերի բաժին Իրավաբանական բաժին Արհեստակցական կազմակերպություն Համապատասխան ստորաբաժանումներ | - | Վարչական աշխատողների պաշտոնի գործող անձնագրեր: |

| | | | | |
|--|------------------------|--|--------------------|---|
| <p>4. Մշակել աշխատանքի նկարագրեր ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար:</p> | <p>01-12.2016</p> | <p>Ռեկտոր Պրոռեկտորներ Կադրերի բաժին Բրավաբանական բաժին Արհեստակցական կազմակերպություն Համապատասխան ստորաբաժանումներ</p> | <p>-</p> | <p>Ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական համակազմի աշխատողների գործող նկարագրեր:</p> |
| <p>5. Մշակել և ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ:</p> | <p>01.2017-12.2020</p> | <p>Ռեկտոր Պրոռեկտորներ Կադրերի բաժին Բրավաբանական բաժին Արհեստակցական կազմակերպություն Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն</p> | <p>20 մլն դրամ</p> | <p>Վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստում և ատեստավորում:</p> |

Խնդիր 4.3. Բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը, բազմազանեցնել իրականացվող սոցիալական ծրագրերը:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|--|-------------------|--|---|---|
| 1. Զարգացնել դասախոսների տարբերակված հավելավճարի մեխանիզմը: | 09.2016 -09.2020 | Ռեկտոր Պրոռեկտորներ Արհեստակցական կազմակերպություն Գլխավոր հաշվապահ | Համապատասխան ֆինանսավորում | Տարբերակված հավելավճարի չափանիշների ճշգրտում և հաշվեկշռի ավելացում: |
| 2. Մշակել վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների տարբերակված հավելավճարի չափանիշներ և համապատասխան կարգ: | 01 - 12.2020 | Ռեկտոր Պրոռեկտորներ Արհեստակցական կազմակերպություն Իրավաբանական բաժին Գլխավոր հաշվապահ | - | Գիտխորհրդի կողմից հաստատված կարգ: |
| 3. Բարձրացնել աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության: | 01.2016 -12 .2020 | Ռեկտոր Պրոռեկտորներ Արհեստակցական կազմակերպություն Գլխավոր հաշվապահ | Համապատասխան ֆինանսավորում | Դասախոսական կազմի միջին աշխատավարձը՝ ՀՀ պաշտոնական միջին աշխատավարձի 125 %, իսկ վարչական և ուսումնաօժանդակ համակազմերինը՝ 75 %: |

| | | | | |
|--|-------------------------|--|-----------------------------------|--|
| <p>4. Ներդնել սոցիալական աջակցության բազմաբնույթ ծրագրեր:</p> | <p>01.2016 -12.2020</p> | <p>Ռեկտոր Պրոռեկտորներ Արհեստակցական կազմակերպություն Գլխավոր հաշվապահ</p> | <p>Համապատասխան ֆինանսավորում</p> | <p>Սոցիալական ծրագրերի հաստատված ցանկ և բյուջեի համապատասխան հոդված:</p> |
| <p>5. Համակողմանիորեն զարգացնել սոցիալական ենթակառուցվածքը, բարելավել հասարակական սննդի, հանգստի և մարզաառողջարանային բազաների պայմանները, ապահովել դրանց մատչելիությունը բոլոր աշխատողների և սովորողների համար:</p> | <p>01.2016-12.2020</p> | <p>Ռեկտոր Պրոռեկտորներ Արհեստակցական կազմակերպություն</p> | <p>Համապատասխան ֆինանսավորում</p> | <p>Վերակառուցված և/կամ վերանորոգված ուսումնասարտադրական ու մարզաառողջարանային բազաներ՝ մատչելի և ճկուն գնային քաղաքականությամբ: ԵՊՀ հասարակական սննդի օբյեկտներում գործող մատչելի գներ և բարձրորակ սնունդ:</p> |

V. ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ:

Խնդիր 5.1. Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել համալսարանական ենթակառուցվածքները:

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | Ժամանակացույց | Պատասխանատու/ներ | Պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Ակնկալվող արդյունքներ |
|---|-----------------|--|--|---|
| 1. Տեխնոլոգիապես վերազինել լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները: | 01.2016-12.2020 | Ռեկտոր Պրոռեկտորներ | 100 մլն դրամ | Տեխնոլոգիապես վերազինված 50 լսարան և լաբորատորիա: |
| 2. Վերանորոգել և արդիականացնել գիտական լաբորատորիաները: | 01.2016-12.2020 | Ռեկտոր Պրոռեկտորներ | 500 մլն դրամ (արտաքին և ներքին ֆինանսավորում) | Արդիականացված շուրջ 15 գիտական լաբորատորիա: |
| 3. Մտեղծել լեզուների ուսուցման կենտրոնի ենթակառուցվածք: | 01.2016-08.2018 | Ռեկտոր Պրոռեկտորներ | 600 մլն դրամ | Լեզուների ուսուցման կենտրոնի ենթակառուցվածքի ստեղծում: |
| 4. Արդիականացնել դահլիճների և սրահների տեխնիկական հագեցվածությունը: | 01.2016-05.2018 | Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր | 150 մլն դրամ | Տեխնիկապես վերազինված մեծ դահլիճ, գիտական խորհրդի նիստերի դահլիճ և Պալլանների սրահ: |

| | | | | |
|---|-----------------|--|---------------|---|
| 5. Արդիականացնել մարզահամալիրը: | 01.2016-12.2018 | Ռեկտոր Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր | 1,1 մլրդ դրամ | Վերանորոգված և արդիականացված մարզահամալիր: |
| 6. Վերակառուցել Դիլիջանի մարզաառողջարանային համալիրը: | 01.2016-12.2018 | Ռեկտոր Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր | 400 մլն դրամ | Վերանորոգված մարզաառողջարանային համալիր: |
| 7. Իրականացնել ուսումնական մասնաշենքերի վերանորոգման աշխատանքներ՝ զուգահեռ ապահովելով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված պայմաններ: | 01.2016-12.2020 | Ռեկտոր Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր | 700 մլն դրամ | Վերանորոգված ուսումնական մասնաշենքեր: |
| 8. Վերանորոգել և արդիականացնել գրադարանի ընթերցասրահներն ու գրապահոցը: | 01.2017-12.2018 | Ռեկտոր Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր Գրադարանի տնօրեն | 200 մլն դրամ | Վերանորոգված գրապահոց և 2 ընթերցասրահ: |
| 9. Ընդլայնել հանրակացարանային բազան: | 01.2017-12.2018 | Ռեկտոր Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտոր | 500 մլն դրամ | 150 հանրակացարանային տեղ: |
